

# ԿՐՕՆԱՓՈՒՆ ՀԱՅԵՐՈՒ ՉԱՐԹՕՆՔԸ

Posted on March 18, 2012 by Keghart



Category: [Opinions](#)



## Հետազոտող Լրագրողի Վկայութիւններ 1980-2011

**Համօ Մոսկոֆեան**, Դիւանագիտական լրագրող, 18-03-2012

***Keghart.com աննշան խմբագրական յայաւուումներով եւ փոփոխութիւններով կը ներկայացնէ լրագրող Հ. Մոսկոֆեանի ներքոյիշեալ խօսքը արտասանուած կրօնափոխ հայերու նուիրուած գիտաժողովի աւարտին Երեւանի մէջ՝ Դեկտեմբեր 2011-ին: Պետական հովանաւորութիւն վայելող սոյն համաժողովին մասնակցեցան հայ եւ օտարազգի արուեստագետներ, գիտահետազոտողներ, հրապարակագիրներ, լրագրողներ ու քաղաքական գործիչներ:- Խմբ.***

1980 թուականի Սեպտեմբերին, երբ Թուրքիոյ մէջ տեղի ունեցաւ զինուորական յեղաշրջում, ֆաշիստական խունթայի ղեկավար Զենան Էվրենի ղեկավարութեամբ՝ հազարաւոր յառաջդիմական թէ ձախակողմեան մարտիկներ, փախչելով զանգուածային ձերբակալութիւններէ ու կախաղաններէ, ապաստանեցան Սուրիա եւ Լիբանան: Անոնցմէ ոմանք, որպէս հմուտ յեղափոխականներ ու մարտարուեստի մասնագետներ, անցան պաղեստինեան յեղափոխական կազմակերպութիւններու շարքերը:

## Հետազոտող Լրագրողի Վկայութիւններ 1980-2011

**Համօ Մոսկոֆեան**, Դիւանագիտական լրագրող, 18-03-2012

***Keghart.com աննշան խմբագրական յայաւուումներով եւ փոփոխութիւններով կը ներկայացնէ լրագրող Հ. Մոսկոֆեանի ներքոյիշեալ խօսքը արտասանուած կրօնափոխ հայերու նուիրուած գիտաժողովի աւարտին Երեւանի մէջ՝ Դեկտեմբեր 2011-ին: Պետական հովանաւորութիւն վայելող սոյն համաժողովին մասնակցեցան հայ եւ օտարազգի արուեստագետներ, գիտահետազոտողներ, հրապարակագիրներ, լրագրողներ ու քաղաքական գործիչներ:- Խմբ.***

1980 թուականի Սեպտեմբերին, երբ Թուրքիոյ մէջ տեղի ունեցաւ զինուորական յեղաշրջում, ֆաշիստական խունթայի ղեկավար Զենան Էվրենի ղեկավարութեամբ՝ հազարաւոր յառաջդիմական թէ ձախակողմեան մարտիկներ, փախչելով զանգուածային ձերբակալութիւններէ ու կախաղաններէ, ապաստանեցան Սուրիա եւ Լիբանան: Անոնցմէ ոմանք, որպէս հմուտ յեղափոխականներ ու

մարտարուեստի մասնագետներ, անցան պաղեստինեան յեղափոխական կազմակերպութիւններու շարքերը:

Որպէս լրագրող, այդ տարիներուն կարողացանք սերտ կապեր հաստատել «Տեվրիմճի Սուլ»ի (Յեղափոխական ձախ), «Տեվրիմճի Եուլ»ի (Յեղափոխական ճանապարհ), «Փարթիզան Եուլ»ի (Հայդուկային ճանապարհ), Թուրք-Քոմունիսթ Փարթիզիզ-Լենինիզիլեր (Թուրքիոյ Համայնավար կուսակցութիւն-Լենինեաններ), THKP Acilciler եւ TIKKO-Turk Isci Koyli Kommunist Partisi (Թուրքիոյ Ժողովրդային եւ Բանուորա-Գիւղացիական համայնավար կուսակցութիւն), P.K.K.-ի (Քիւրտիստանի Բանուորական կուսակցութիւն) ներկայացուցիչներու հետ. անոնցմէ շատեր ծագումով կրօնափոխ, քրտացած կամ թրքացած հայեր էին... իրենց շարքերուն մէջ էին Հայոց Յեղասպանութեան ճանաչման պայքարի մարտիկներ՝ Թաներ Աքչամ, Ռագէպ Չարաբօլուն, Հրանդ Տիւնքը, Միհրաճ Ուրալը, Ապտուլլահ Օճալանը-Աբօն, Էրքին Էրքիները, Արամ Տիգրանը եւ շատ ուրիշներ: 1982 թուականի իսրայելեան ներխուժումէն երկարամեայ կալանաւորի իրավիճակին մէջ գտնուելէ ետք՝ մեր գլխաւոր հանդիպումը, այս անգամ համշէնահայերու եւ Ալեւի-քրտացած հայերու հետ տեղի ունեցաւ Գերմանիոյ Ֆրանքֆուրթ եւ Վիսպատեն քաղաքներուն մէջ, 1999-ին: Ռիզէի թրքախօս, կրօնափոխ եւ ապա քրիստոնեայ մկրտուած Ալիէ-Ալիս Ալթ, իր եղբայրը՝ Սատթ Պոսթան - Տիգրան Կոստանեան, զաւակը՝ Տենիզ Ալթ ազգականներն էին Թուրքիոյ երբեմնի վարչապետ Մետուտ Երլմազի: Ալիս Ալթի տիփլումային աշխատանք-գիրքը՝ «Համշէնահայութիւնը Պատմութեան Հայելիին Մէջ», թարգմանուեցաւ յունարէնի (գերմաներէնէ) Երջօ Անտրեատիսի կողմէ եւ թրքերէնի՝ Ռագէպ Չարաբօլուի ջանքերով: Գերմանիոյ համշէնահայերէն բաւական աշխոյժ աշխատանք կը տաներ Նուրետտին Կուրման: Կարելի եղաւ շարք մը յօդուածաշարքերով, Սփիւռքի եւ Մայր Հայրենիքին ծանօթացնել կորսուած հայու զաւակներու իսկական ղեկավարներէն մի քանին, որոնք կարողացան իրենց հարիւրաւոր ազգականներուն մէջ յառաջացնել անսպասելի զարթօնք մը, տարիներու լռութենէ ետք:

Համշէնահայերու արեւելեան, հայախօս հատուածին հետ մեր հանդիպումները, հարցազրոյցները եւ նկարահանումները, Մոսկուայէն 1250 քմ. Հարաւ-արեւելք գտնուող Ֆետերցովքա գիւղին մէջ, բաւական նշանակալից էին: Սթալինի եւ Բերիայի կողմէ դէպի Ղրիզստան ու Ղազախստան արքորուած Աքպէոյիւքովներու (Ճերմակեան), Քարաիպրահիմովներու, Շապանօղլիներու եւ այլոց զաւակներն ու թոռները, կենցաղային ծանր պայմաններու մէջ կը բնակէին Ռուսիոյ այս տարածքին վրայ, Նոյնիսկ ուրախ հարսանիք ալ կազմակերպելով, յաճախ չիմանալով որ իրենք ոչ միայն հոմշէնցի են՝ այլ հայեր, լեզուն որ սահունօրէն կը խօսէին՝ համշէնահայերէն: Անոնցմէ ոմանք, Ղրիզստանի համշէնահայերու ղեկավար Ռուսլան Քարապաճաքովի նման, այցելելով Հայաստան եւ Արցախ, ցանկութիւն յայտնեցին վերադառնալ Մայր Հայրենիքի ազատագրուած հողերը, երկարամեայ արքորէ ետք: Այս հարցով ... Մոսկուայի «Համշէն» Միութեան երիտասարդներ՝ Գեորգ Միխիթարեանի, Գարիկ Կարանեանի, Աշոտ Տուտուքճեանի ջանքերը, Լ.Ղ.Հ.ի վարչապետ Արայիկ

## Յարուբիւնեանի բարեհաճ աջակցութեամբ՝ կը շարունակուին:

Վերադառնալով Գերմանիա, Ալեւի թէ Սիւննի դաւանանքի պատկանող կրօնափոխ հայերու հարցով անգնահատելի տեղեկատուութեան, լուսանկարներու թէ ֆիլմերու աղբիւր դարձան՝ Արեւմտեան Հայաստանի Մուշ-Կիւնտեմիրա շրջանէն՝ Սիմոն (Սետեթ) Կիւնտէնը, իր եղբայրն ու հարազատ Արմանն ու Օրհանը, Վարթօ-Հասաքէ-Վիսպատեն տառապանքի ուղին անցած ալեհեր, բայց միշտ խիզախ Դանիէլը ու տղան Յակոբը, բոլորն ալ քրիստոնեայ մկրտուած եւ միշտ սերտ կապերու մէջ գաւթուած Հայաստանի հազարաւոր հայերու հետ: Սիմոնի հայրը՝ Հիւսէյն Կիւնտէնը, 2007-ին այցելելով Երեւան, Սասունի Քնար գիւղին Տարօսի սրբազան հող բերաւ հանգուցեալ վարչապետ, մշեցի Անդրանիկ Մարգարեանի գերեզմանին: Մշեցի Արմէն Մարտիրոսեան ուղեցոյց է Արեւմտեան Հայաստան այցելող բազմաթիւ սփիւռքահայերու: ... քրտական բանուորական կուսակցութեան երբեմնի ազատամարտիկ Սամուէլ Ֆելէքեանը (Ալի Իսսան) ... վերադարձած է ազատագրուած Հայաստան տասնեակ տարիներ որպէս քաղաքական բանտարկեալ մնալով թրքական կալանավայրերու մէջ. այսօր կամուրջի դէր կը կատարէ Թուրքիոյ եւ Գերմանիոյ կրօնափոխ հայերու եւ Մայր Հայրենիքի միջեւ:

Վերջերս, Գերմանիոյ Վիսպատեն քաղաքին մէջ ներկայ եղանք 1500 հրաւիրեալներու հետ՝ Սիմոն Կիւնտէնի հարսանիքին, Վարթոյէն ալեւի, ծագումով հայ օրիորդի մը հետ, 1938 թուին Տերսիմի Չազա ապստամբութեան ընթացքին զոհուած հերոս-նահատակ Սէյիտ Ռիզայի ծոռնուհին Է: Կնքահայրը, ծագումով երզրումցի սիւննի-քրտացած, ապա քրիստոնեայ մկրտուած հայ Տիգրան (Շահին Մենտերես) Չաթինքայան էր, որ 2000 թուականին Թուրքիոյ կառավարութեան դէմ դատական հայց ներկայացնելով, կարողացաւ վերադարձնել իր հայ-քրիստոնեայ ինքնութիւնը թրքական անձագրին մէջ:

Մեր հանդիպումը եւ ամրապնդուած բարեկամութիւնը Չազա մեծ երգիչ ու երաժիշտ Միքայէլ Ասլանի ու Ճեմիլ Քոչքիրիի հետ, Քզըլպաշ, Նոյնպէս Չաֆեր Կիւչիւքի..., լոյս սփռեց մինչ այդ անձանօթ ու թաքնուած ողբերգութեանց վրայ, որոնք տեղի ունեցած են 1915 թուի Հայոց Ցեղասպանութեան ընթացքին հազարաւոր հայ որբերու փրկութեան Չազա նահատակ-հերոս ղեկավար Սէյիտ Ռիզայի կողմէ, որուն պատճառով ալ գլխաւորաբար, 1938 թուին որպէս ապստամբ կախաղան բարձրացուցեալ Քեմալ Աթաթիւրք-Իսմէթ Ինէօնիւ բռնատիրութեան կողմէ: Ըստ Չազա պատմաբան Մոնզուր Ճեմի վկայութեան (որուն արիւնակից քոյրը հայուհի է), Սէյիտ Ռիզայի տան մէջ բռնագրաւուած ու ոչնչացուցած են բազմաթիւ հայկական հազարամեայ մագաղաթներ ու աւետարաններ:

Հայկական հսկայական բառապաշարի, աւանդութեանց, տօնակատարութիւններու առկայութիւնը Չազա-Տերսիմ մշակոյթին մէջ՝ առանձնապէս յայտնի դարձաւ Մեսուտ Քեսքինի (Ֆրանքֆորթի «Կեօթէ»ի համալսարան), Նատիրէ Կեօքթաշի (Անգարայի համալսարան), Աննիքա Թեօրնէի (Պոխում-Գերմանիա) եւ մանաւանդ Միքայէլ Ասլանի հռչակաւոր «Փեթակ» ալպոմով՝ օգտուելով Մեծն Կոմիտասի աշակերտ Տիգրան

Թումաճեանի արխիւէն եւ օգնութեամբ «Ակունք» համոյթի: Ալպոմով ներկայացուած են Տերսիմի հայոց դարաւոր եղանակները, որոնք կ'երգուին նաեւ զազաքի ու թրքերէն լեզուներով:

Այս բոլոր տուեալներուն դիմաց, ամփոփելով մեր ձեռք բերած տուեալները, կրօնափոխ հայերը կրնանք բաժնել հետեւեալ խումբերու

1) Մահմետական եւ քրիստոնեայ համաշխարհայէր, որոնք կ'ապրին ինչպէս Թուրքիոյ (Արեւմտեան Հայաստանի) Համամ Ամատունի իշխանին կառուցած Համամաշէն պատմական բերդաքաղաքին, Տրապիզոնի, Խոտորջուրի, Քաջքարի, Ռիզէի շրջապատին մէջ, ինչպէս նաեւ Վրաստանի, Ռուսիոյ, Ղրիստոնեայի ու Ղազախստանի Վորոնէժ, Ռոստով, Ֆետերցովքա, Օշ, Չիրքիսո եւ այլ բնակավայրերու մէջ (կրօնափոխները): Իսկ քրիստոնեայ համաշխարհայէրը, գլխաւորաբար Մոսկուայի, Սոչիի, Կրասնոտարի, Կակրայի, Աբխազիոյ բնակավայրերուն մէջ, որպէս հետնորդները Արեւմտեան Հայաստանէն արտագաղթած թրքական հալածանքներէն փախչած համաշխարհայէրու: Այսօր մեծ թիւ կը կազմեն նաեւ՝ Գերմանիոյ, Հոլանտայի, Պելճիքայի, Ֆրանսայի, Գանատայի եւ Ա.Մ.Ն.ի համաշխարհայէրը, որոնք կապերը կը պահպանեն իրենց հայրենակիցներուն հետ: Համացանցի վրայ կան բազմաթիւ կայքէ-ջեր, Facebook-ի վրայ ամենօրեայ հաղորդակցութեան համակարգչային միջոցներ, որոնք կ'օգնեն համաշխարհայէրու զարթօնքին: Այս առիթով կարելի է յիշել համաշխարհայէր Ս. Վարդանեանի, Հ. Ալվրդեանի, բանաստեղծ Ե. Վայեճի, Ռ. Սաֆրաստեանի, Ռ. Մելքոնեանի ակադեմիական մակարդակով գործունեութիւնը այս բնագաւառին մէջ: Մեծ աշխատանքներ կը տարուին Մոսկուայի քրիստոնեայ Համաշխարհայէրու Միութեան ու երիտասարդական կազմակերպութեան անդամները՝ յանձինս Սերկէյ Գալինճեանի, Աշոտ Տուտուքճեանի ու իրենց հրատարակած «Համաշխարհայէր» գունագարդ ամսագրին կողմէ:

2) «Ալեւի» ու «Սիւննի» դաւանանքին պատկանող, Չազա ու Քըզըլպաշ, քրտացած եւ զրադաշտական ծագումով հայեր, որոնք գլխաւորաբար կ'ապրին Սասունի, Մուշի, Վարթոյի, Կիւնտեմիրայի, Տերսիմի, Պաթմանի, Էրզրումի շրջաններու մէջ, նաեւ մի քանի հազար ալ Գերմանիոյ, Հոլանտայի, Պելճիքայի, Շուէտի զանազան քաղաքներուն եւ ամառներուն մէջ: Անոնց թիւը օրէ-օր կ'աւելնայ, շնորհիւ համացանցային կայքէ-ջերու, Facebook-ի միջոցով ստեղծուած կապերու, համաժողովներու, նորանոր ուսումնասիրութիւններու: Կ. Պոլսոյ Պատրիարքական փոխանորդ Արամ Աթեշեան եւ Գերմանիոյ հոգեւոր Առաջնորդ Գարեգին Արք. Պէքճեան, որոնց հարազատներուն մէջ ալ կան կրօնափոխ հայեր, բազմիցս թրքական մամուլին յայտարարեցին “գաղտնի” հազարաւոր հայերու գոյութիւնը: Անոնց ինքնութիւնը փաստուելէ ետք, շատեր քրիստոնեայ մկրտուեցան Պոլսոյ, Քէօլնի թէ Հանովրի, Վիեսպատենի եւ Ֆրանքֆուրթի մէջ...:

Բաւականին մեծ թիւ կը կազմեն Չազա ու Քըզըլպաշ զրադաշտական հայերը Տերսիմի թէ Արեւմտեան Եւրոպայի մէջ: Անոնք նոր եւ հօր ուժ են, ունին զարգացած

ղեկավարութիւն, Տերսիմի ցեղասպանութեան ընդունման եւ անկախութեան պայքարին մէջ իրենց ուժերը միացուցած են իրենց Չազա եւ քիւրտ եղբայրներուն հետ: Հիմնած են իրենց միութիւնները եւ կայքէջերը, կը կազմակերպեն մշակութային ու երաժշտական համերգներ Տերսիմի թէ Արեւմտեան Հայաստանի մէջ, հայ թէ օտար դէմքերու եւ ղեկավարներու հոծ մասնակցութեամբ:

3) Արաբացած եւ ասորացած կրօնափոխ եւ քրիստոնեայ հայեր ...Հայոց Ցեղասպանութեան օրերուն, հազարաւոր որբ-որբուհիներ փրկուեցան Սուրիոյ եւ Միջագետքի արաբ ցեղախումբերու կողմէ, որոնցմէ մեծ մասը յանձնուեցան հայ թէ հայասեր որբահաւաքներուն... Շատեր մնացին եւ արաբացան, ուրիշներ ալ ասորացան, միշտ պահելով իրենց հայկական ինքնութիւնը: Անոնց մասին բազմաթիւ յօդուածներ, լուսանկարներ ու ֆիլմեր կան: Մի քանի տարի առաջ, Սուրիոյ արաբ ցեղախումբերու գլխաւոր “շէյխ”երը Երեւան այցելելով պատմեցին բազմաթիւ հայ-հայուհիներու մասին, որոնք կրօնափոխ դառնալով իսկ` պահեցին իրենց ինքնութիւնը, յաճախ հանդիպելով հեռու երկիրներէ եկած, վերագտած հարազատներուն հետ` շատ յուզիչ պայմաններու մէջ:

Դեպի հայութիւն վերադարձի պայքարը կը շարունակուի: Արշալոյսը մօտ է համընդհանուր զարթօնքի շարժման հետ:

